ՀՏԴ 330.5

Տնտեսագիտություն

Միհրան ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի
ֆինանսահաշվային ամբիոնի ասիստենտ
E-mail: Mihran.tadevosyan.93@mail.ru

ՊՂՆՁԻ ԴԵՐԸ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բնական ռեսուրսների արժևորումը և ճիշտ օգտագործումը հանգեցնում է երկրների զարգացմանը և բարգավաճմանը: Ըստ Համաշխարհային բանկի վերլուծությունների՝ բնական կապիտալը ցածր և միջին եկամուտ ունեցող երկրների ազգային հարստության կառուցվածքում զգալի տեղ է զբաղեցնում: Հայաստանի Հանրապետության համար սուղ բնական ռեսուրսների պարագայում պղնձի համեմատաբար մեծ պաշարները հնարավորություն են զարգացման, տնտեսական կայուն աճի ապահովման գործում: Համաշխարհային միտումները՝ մեքենաշինական արդյունաբերության մեջ կատարվող փոփոխությունների տեսանկյունից, լավ պոտենցիալ են ստեղծում ՀՀ բնական ռեսուրսների դերի բարձրացման համար :

Առաջարկվում է վերանայել պղնձի արտահանման մոդելը՝ խտանյութից անցում կատարելով պատրաստի արտադրանքի արտահանմանը, և մշակել քաղաքականություն արդյունաբերության զարգացման համար:

Բանալի բառեր՝ ազգային հարստություն, բնական կապիտալ, պղինձ, պղնձի խտանյութ, էլեկտրական շարժիչներ, հիբրիդային շարժիչներ, մեքենաշինական արդյունաբերություն:

М.Тадевосян

РОЛЬ МЕДИ В КОНТЕКСТЕ НАТУРАЛЬНОГО КАПИТАЛА НАЦИАНАЛЬНОГО БОГАСТВА АРМЕНИИ

Ценное и правильное использование природных ресурсов ведет к развитию и процветанию страны. Согласно анализам Всемирного банка, природный капитал занимает значительное место в структуре национального богатства стран с низким и средним уровнем дохода. В случае скудности природных ресурсов для Республики Армения, относительно большие запасы меди являются возможностью обеспечить развитие и устойчивый экономический рост. Мировые тенденции изменений в машиностроении создают хороший потенциал с точки зрения увеличения роли природных ресурсов РА.Предлагается пересмотреть модель экспорта меди, перейдя от концентрата к экспорту готовой продукции, и разработать политику развития отрасли.

Ключевые слова: Национальное богатство, природный капитал, медь, медный концентрат, электродвигатели, гибридные двигатели, машиностроение.

M.Tadevosyan

THE ROLE OF COPPER IN THE CONTEXT OF THE NATURAL CAPITAL OF THE NATIONAL WEALTH OF ARMENIA

According to the analysis of the World Bank, natural capital occupies a significant place in the structure of the national wealth of low- and middle-income countries. Valuable and proper use of natural resources leads to the development and prosperity of the country. In case of scarcity of natural resources for the Republic of Armenia, the relatively large reserves of copper are an opportunity to ensure development and sustainable economic growth. The global trends of changes in mechanical engineering create a good potential in terms of increasing the role of the natural resources of the Republic of Armenia.

It is proposed to revise the copper export model, moving from concentrate to export of finished products, and develop a policy for the development of the industry.

Key words: National wealth, natural capital, copper, copper concentrate, electric motors, hybrid motors, mechanical engineering.

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման և կայուն տնտեսական աճի ապահովվման կարևորագույն ցուցանիշներից մեկը ազգային հարստությունն է: Այն ազգի տնօրինման տակ եղած ակտիվների ամբողջականությունն ժամանակի տվյալ պահին[1]: Ազգային հարստության հաշվարկման համար հիմք է ընդունվում Համաշխարհային բանկի կողմից առաջարկված մեթոդաբանությունը, ըստ որի՝ ազգային հարստությունը բաղկացած է չորս կոմպոնենտներից՝ բնական կապիտալ, մարդկային կապիտալ, արտադրված կապիտալ, զուտ արտաքին ակտիվներ:

Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը Համաշխարհային բանկի կողմից 2014թ-ին գնահատվել է 52.894 մլրդ ԱՄՆ դոլլար, որում բնական կապիտալը կազմում է 12.702 մլրդ ԱՄՆ դոլլար[2]:

ՀՀ բնական ռեսուրսների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում գունավոր մետաղները, մասնավորապես՝ պղինձը: Պատահական չէ, որ Զանգեզուրի Պղնձամոլիբդենային կոմբինատը տարիներ շարունակ հանդիսանում է ՀՀ խոշոր հարկ վճարողներից մեկը, իսկ 2021թ. խոշորագույն հարկ վճարողն էր՝ 48.842 մլրդ ՀՀ դրամ ցուցանիշով: 2022թ-ի առաջին ինը ամիսների ՊԵԿ տվյալներով բոլոր հարկ վճարողների շարքում բացառիկ առաջատարը դարձյալ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն է՝ 129,163 մլրդ ՀՀ դրամ ցուցանիշով, որը ընդհանուր եկամուտների շուրջ 9,1%-ն է կազմում. կոմբինատի առանցքային արդյունահանվող մետաղը կամ խտանյութը պղինձն է[3]:

Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պղնձի պաշարները 2006թ. գնահատվել են 5.2մլն տոննա (Աղյուսակ 1), որը ՀՀ համար բավական մեծ պաշար է:

---

[1] *Տես՝ **Հակոբյան Հ.**, Ազգային հարստության վիճակագրություն, Երևան 2004թ., էջ 9 :*

[2] *Տես՝ The Changing Wealth of Nations 2018. Building a Sustainable Future. World Bank Group page 226 https://openknowledge.worldbank.org/bitstream/handle/10986/29001/9781464810466.pdf*

[3] *Տես՝ https://www.petekamutner.am/Shared/Documents/_ts/_ti/Taxpayer_Information_Listings/2022/ck_hhpektt_2022_3_1000_khv_hark.xlsx*

Անվանում	Քանակը	Չափման միավոր
Հանքաքար	2.21մլրդ	տոննա
Պղինձ	5.2 մլն	տոննա
Մոլիբդեն	0.7 մլն	տոննա

Աղյուսակ 1. ԶՊՄԿ Քաջարանի հանքավայրի B+C1 պաշարները[1]

Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս արտահանում է ոչ թե վերջնական պղնձի տեսքով, այլ արտահանվում է պղնձի խտանյութը: Վերջին վեց տարիներին խտանյութի արտահանման ծավալները տատանվել են՝ 2016թ. կազմելով 397207 տոննա 2021թ-ին կազմելով 429483 տոննա: Մաքսիմալ ցուցանիշը գրանցվել է 2019թ. կազմելով 562015 տոննա (դիագրամ 1):



Դիագրամ 1. Պղնձի խտանյութի արտահանումը քանակային արտահայտությամբ 2016-2021թթ-ին (տոննաներով)[2]:

[1] Տես՝ *http://www.zcmc.am/arm/our-operations/mining/*

[2] Տես՝ *https://www.petekamutner.am/Shared/Documents/_cs/_ci/Customs_Statistics/General_Indicators/RA_Foreign_Trade_By_Products/2022/vt_artar_apr_karuc_2020_2021.xls*

Պղինձը միջազգայնորեն վաճառվող հումք է, և նրա գինը որոշվում է մետաղների գլխավոր բորսաներում, ինչպիսիք են՝ Լոնդոնի մետաղների բորսան (LME), Նյու Յորքի հումքային բորսան (COMEX) և Շանհայի ֆյուչերսային բորսան (SHFE): Այս բորսաներում գները սովորաբար որոշվում են մետաղի նկատմամբ համաշխարհային առաջարկով ու պահանջարկով, սակայն ժամանակ առ ժամանակ նրանց վրա զգալիորեն ազդում են ներդրումային հոսքերը և տարադրամների փոխարժեքները: Պղնձի համաշխարհային առաջարկը ներկայացնող կողմը՝ պղինձ արդյունահանող երկրներն են, իսկ պահանջարկ ներկայացնող կողմը այն օգտագործողները: Օգտագործման ծավալները պայմանավորված են տնտեսության այն ճյուղերի զարգացմամբ, որտեղ օգտագործվում է պղինձը որպես հումք:

Համաշխարհային ավտոմեքենաշինական արդյունաբերության ոլորտում ներկայումս տեղի են ունենում տիկտանական շարժեր՝ պայմանավորված մեքենաներում կիրառվող շարժիչների տեսակի փոփոխությամբ: Ավանդական բենզինային և դիզելային շարժիչներին փոխարինելու են գալիս էլեկտրաէներգիայի միջոցով աշխատող շարժիչները, որը էական առաջընթաց է մթնոլորտի աղտոտվածության նվազեցման, գլոբալ տաքացման, շրջակա միջավայրի վրա մարդու ազդեցության նվազման ուղղությամբ: Բենզինային շարժիչով աշխատող միջին ավտոմեքենայի վրա ծախսվում է մոտ 20կգ պղինձ, որը հիմնականում օոգտագործվում է էլեկտրական միացումների համար: Հիբրիդային շարժիչներով մեքենաների համար օգտագործվում է կրկնակի ավել, այսինքն՝ մոտ 40 կգ պղինձ, իսկ ամբողջությամբ էլեկտական շարժիչով աշխատող մեքենաների համար օգտագործվում է մոտ 80 կգ պղինձ: Էլեկտրական շարժիչով ավտոբուսների համար կպահանջվի մոտ 367 կգ պղինձ:

Ներկայումս զարգացած երկրները լուրջ քայլեր են ձեռնարկում էլեկտրական շարժիչով աշխատող մեքենաների տեսակարար կշռի ավելացման ուղղությամբ: Այսպես, Եվրախորհրդարանը 2022թ. հունիսի 8-ին ձայների 339 կողմ, 249 դեմ և 24 ձեռնպահ հարաբերակցությամբ ընդունել է որոշում, որով 2035թ-ից արգելվում է Եվրամիության տարածքում ներքին այրման շարժիչներով աշխատող մեքենաների վաճառք[1]: Այս որոշումը պետք է վավերացնեն անդամ երկրների կառավարությունները, սակայն ավտոմեքենաշինական ընկերությունները արդեն հայտնել են ամբողջական աջակցություն այս որոշմանը:

Հաշվի առնելով այն հանագամանքը, որ աշխարհի ինդուստրիալ զարգացած երկրները որդեգրել են «ածխածնային չեզոքության» քաղաքականությունը՝ առաջիկա տասնամյակի ընթացքում շարունակաբար

[1]*Տես՝ https://www.europarl.europa.eu/portal/en:*

աճելու է էլեկրոնային շարժիչով աշխատող ավտոմեքենաների տեսակարար կշիռը: ԵՄ երկրներում մեքենաների վաճառքի 10-ամյա վերլուծությունը ցույց է տալիս, որ ԵՄ երկրներում տարեկան միջինում վաճառվում է 14 մլն ավտոմեքենա, որի միայն 20%-ն է էլեկտրական շարժիչով: Այսինքն՝ տարեկան 11.2 մլն մեքենա վաճառվում է ներքին այրման շարժիչով (դիագրամ 2):



Դիագրամ 2. Եվրամիության երկրներում տարեկան վաճառվող մեքենաների քանակը (մլն հատ):[1]

Վերը նշվածից կարող ենք փաստել, որ միայն ԵՄ տարածքում 2035թ-ից մեքենաշինության ոլորտում պղնձի օգտագործման տեսակարար կշիռը ավելանալու է տարեկան մոտ 1մլն տոննայով (2021//10մլն*20կգ//, 2035//11.2մլն*80կգ//): Իսկ համաշխարհային միտումները, ճիշտ է, այդքան ժամկետային առումով կարճաժամկետ չեն վերափոխումների տեսանկյունից, սակայն անցումը անխուսափելի է և առաջացնելու է պղնձի պահանջարկի մեծ աճ:

Մեր կարծիքով, պղնձի օգտագործման բավական աճ կլինի նաև արևային էներգիայի ստացման համար օգտագործվող պանելների արտադրության մեջ կիրառության տեսանկյունից:

Այսպիսով, անհրաժեշտ է պղնձի շարունակ աճող դերը օգտագործել ի նպաստ ՀՀ տնտեսության զարգացմանը՝ այդ ուղղությամբ իրականացնելով շատ ճիշտ քաղաքականություն: Անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել պղնձի արտահանման կառուցվածքի փոփոխության ուղղությամբ,

[1] *Տես՝ www.tadviser.ru/index.php/Статья:Автомобильный_рынок_Евросоюза:*

մասնավորապես խտանյութի փոխարեն արտահանել պատրաստի պղինձ, ինչը իր հերթին կհանգեցնի արդյունաբերության զարգացմանը ՀՀ-ում: Այդ կոնտեքստում նպատակահարմար կլինի պղնձաձուլարանի կառուցումը, որը նաև ՀՀ ներկա կառավարության համար առանցքային խնդիրներից է:

Այսօրվա աշխարհաքաղաքական պրոցեսները Սյունիքի շուրջ նույնպես պատահական բնույթ չեն կրում, քանզի մեր դարավոր թշնամիները նույնպես հասկանում են մեր ունեցած հարստության ներկա և ապագա արժեքը և կգործադրեն բոլոր ջանքերը այդ ստրատեգիական հարստությանը տիրանալու համար:

Ազգային հարստության տեսանկյունից պետք է հասկանանք, որ պղնձի մեր պաշարները չպետք է գնահատել այսօրվա գներով, այլ դրա դիսկոնտավորված արժեքով , որը բավականին բարձր ցուցանիշի է հանգեցնելու:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը :